

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

----- 2015 թ. № ----- -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 1999 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 16-Ի № 226 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
70-րդ հոդվածի 5-րդ մասի՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 1999 թվականի ապրիլի 16-ի
«Հայաստանի Հանրապետության բյուջետային հիմնարկների աշխատողների
պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» № 226 որոշման № 2 հավելվածի
20-րդ, 21-րդ, 22-րդ, 24-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:

2. 23-րդ կետում՝

1) 1-ին պարբերությունից հանել «ինչպես նաև նրանց մարզիչներին» բառերը.

2) 3-րդ պարբերությունն ուժը կորցրած ճանաչել.

3) 4-րդ պարբերությունից հանել «իսկ նրանց մարզիչներին՝ 40 հազար դրամ՝
նրանց սաների» բառերը.

4) 5-րդ պարբերությունից հանել «իսկ նրանց մարզիչներին՝ 30 հազար դրամ,
նրանց սաների» բառերը.

5) 6-րդ պարբերությունից հանել «իսկ նրանց մարզիչներին՝ 20 հազար դրամ,
նրանց սաների» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից: